Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-477-19.12.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում

1) 1-ին մասի 17-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**արտադրական կանեփի վերամշակման գործընթաց՝** արտադրական կանեփի բույսերի չորացումը, արտադրական կանեփի բուսախեժի առանձնացումը բույսերից, որոնցից այն ստացվում է, ինչպես նաև այն գործընթացները, որոնց միջոցով ստացվում են յուղ, թուղթ, շինանյութ, թել կամ այլ վերամշակվող նյութեր.»

2) 1-ին մասը լրացնել 20-րդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ

«**արտադրական կանեփի չորացված զանգված՝** մշակման գործընթացում խոնավության կորստի արդյունքում ստացված զանգված:»

Հոդված 2. Օրենքի 45.3-րդ հոդվածի 5-րդ մասում և 45.5-րդ հոդվածի 3-րդ մասում «փոխանցել» բառը փոխարինել «օտարել» բառով:

Հոդված 3. Օրենքի 45.4-րդ հոդվածում

1) 1-ին մասի 2-րդ կետում «արտադրական կանեփի բույսի» բառերը փոխարինել «արտադրական կանեփի բույսերի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի» բառերով,

2) 1-ին մասի 2-րդ կետում «տիրապետում» բառից հետո լրացնել «,օգտագործում և տնօրինում» բառերը,

3) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) արտադրական կանեփի բույսի, արտադրական կանեփի, արտադրական կանեփի չորացված զանգվածի կամ արտադրական կանեփի բուսախեժի ոչնչացում »

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Արտադրական կանեփի փաթեթավորման, տեղափոխման, պահեստավորման, ոչնչացման, տիրապետման, օգտագործման և տնօրինման վերաբերյալ պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 45.6-րդ հոդվածում

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիցենզավորման կարգում արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման համար նախատեսվում են պահանջներ, այդ թվում՝ լիցենզիա ստանալու համար դիմողի ֆինանսական և գույքային վիճակի, կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազագույն չափի վերաբերյալ, ինչպես նաև այլ պահանջներ:»:

2) 6-րդ մասի 1-ին կետում «ունեն դատվածություն» բառերը փոխարինել «դատապարտվել են» բառով, 2-րդ կետում «տառապում են թմրամոլությամբ» բառերը փոխարինել «առկա են թմրաբանական հիվանդություններ» բառերով:

3) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա ստացած անձինք նախքան արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավվելը լիցենզավորող մարմին են ներկայացնում աշխատակիցների անձնագրային տվյալները, թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հետ կապված հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկված լինելու կամ այդպիսի վարչական իրավախախտման կատարման համար

պատասխանատվության ենթարկված լինելու և թմրաբանական հիվանդությունների բացառման վերաբերյալ տեղեկություններ: »

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ մասերով.

«8. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հետ կապված հանցագործության կատարման համար դատապարտված կամ այդպիսի վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկված կամ թմրաբանական հիվանդությունների առկայությամբ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք չեն կարող հանդիսանալ աշխատակիցներ: Լիցենզավորման կարգով կարող են նախատեսվել աշխատակիցներին վերաբերող այլ պահանջներ:

9. Լիցենզավորող մարմինը վարում է աշխատակիցների ռեեստր, որի վարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական___լիազոր մարմնի կողմից: Աշխատակիցների ռեեստրի տվյալներին հասանելիություն պետք է ունենան նաև լիցենզավորված անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինները:

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը ստացված հայտերը և կից փաստաթղթերը ներկայացնում է շահագրգիռ պետական մարմիններին: Շահագրգիռ պետական մարմինները ներկայացված հայտերը և կից փաստաթղթերը իրենց լիազորությունների շրջանակում ուսումնասիրելով ներկայացնում են դրանց վերաբերյալ դիրքորոշում:

11. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունն իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրում է հայտերը և կից փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը սպառնացող ռիսկերի, տվյալ տնտեսական գործունեության քողի տակ ենթադրյալ հանցավոր գործունեության, դրան նպաստող պայմանների ու պատճառների վերհանման, ինպես նաև տնտեսական անվտանգության ապահովման և կոռուպցիայի հակազդման, թմրամիջոցների միջազգային ապօրինի շրջանառության և հանցավոր ճանապարհով ստացված գույքն

օրինականացնելու, փողերի լվացման դեմ պայքարն արդյունավետ կազմակերպելու նպատակով և ներկայացնում համապատասխան դիրքորոշում:

12. Ներքին գործերի նախարարությունը իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրում է արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավված և նրանց փոխկապակցված անձանց մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ներկայացված անվտանգության ապահովման պլանը, այնուհետև ներկայացնում է դրանց վերաբերյալ դիրքորոշում:

13. Էկոնոմիկայի նախարարությունն իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրում է հայտերը, կից փաստաթղթերը և ներկայացնում է դիրքորոշում՝ արտադրական կանեփի բույսերի սորտերի, արտադրական կանեփի (սերմերի, մայր բույսերի, կտրոնների) մշակության առանձնահատկությունների և արտադրատեսակների քանակների վերաբերյալ:

14. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է արտադրական կանեփի արտադրության գործընթացների իրականացման համար նախատեսված համապատասխան տարածքների հիմնական պահանջները, որոնց լրացուցիչ չափանիշները կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կողմից:

15. Լիցենզիայի գործողությունը չի կարող ավելի ուշ սկսել, քան լիցենզիայի հայտ ներկայացնելու օրվանից երկու տարվա ընթացքում: Հայտատուն լիցենզավորման հայտ ներկայացնելիս կարող է հայցել մինչև երկու տարվա ժամկետի տրամադրում լիցենզավորման ենթակա գործունեության համար նախատեսված կառույցները կառուցելու համար:

16 Եթե երկու տարվա ընթացքում լիցենզիա ստացած անձը չի ներկայացնում վերապահմամբ նախատեսված փաստաթղթերը, կամ այդ տարածքները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջներին, ապա լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում լիցենզավորող մարմնի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 66-րդ

հոդվածի 3-րդ մասի «բ» կետի հիմքով, անկախ տվյալ լիցենզիայի գործողությունը կասեցված լինելու հանգամանքից:»:

Հոդված 5. Օրենքի 45.7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Քվոտայով նախատեսված քանակական սահմանափակումներից շեղումը համարվում է տրամադրված քվոտաների վերանայման հիմք: Քվոտաների վերանայման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Լիցենզավորված անձը մինչև լիցենզիայով սահմանված գործունեության իրականացման տվյալ տարվա վերջին եռամսյակը կարող է դիմել նույն տարվա քվոտաների վերանայման: Ավելացման կարգով քվոտաների վերանայման դեպքում, սահմանվելիք քվոտան չպետք է գերազանցի մեկ լիցենզավորված անձի համար սահմանված և միաժամանակ ընդհանուր սահմանված քվոտաների առավելագույն քանակները: Քվոտաների փոփոխման թույլատրելի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 6. Օրենքի 45.8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները լիցենզավորման կարգով սահմանված տարածքներում պետք է ապահովեն տեսաձայնագրող սարքերի առկայությունը, ինչպես նաև տեսաձայնագրող սարքերի ձայնագրությունների պահպանումը առնվազն 6 ամիս ժամկետով՝ վերահսկողության շրջանակներում վերահսկողություն իրականացնող պետական մարմինների պահանջով այն ներկայացնելու համար:»:

Հոդված 7. Օրենքի 45.9-րդ հոդվածում

1) 1-ին մասից հանել «և պատասխանատվության միջոցների կիրառման» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով.

«8.Դիտարկման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան պահանջների, լիցենզավորման պայմանների խախտման դեպքում

վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձը տալիս է որևէ գործողություններ կատարելու կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբեյալ կարգադրագրեր՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

9.Դիտարկման արդյունքները հիմք են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացնելու համար:

10.Դիտարկման ընթացքում հայտնաբերված խախտումների և անհամապատասխանությունների համար վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տված կարգադրագրի պահանջները խախտելու դեպքերի:»:

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

2. Սույն օրենքով նախատեսված փոփոխություններից բխող լիցենզավորման կարգում փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

~~Առաջին ընթերցում~~
Երկրորդ ընթերցում
(Կ-477-19.12.2022-ՏՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ ~~հոդվածի 1-ին մասի 17-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~ հոդվածում

~~**«արտադրական կանեփի վերամշակման գործընթաց՝** արտադրական կանեփի բույսերի չորացումը, արտադրական կանեփի բուսախեժի առանձնացումը բույսերից, որոնցից այն ստացվում է, ինչպես նաև այն գործընթացները, որոնց միջոցով ստացվում են յուղ, թուղթ, շինանյութ, թել կամ այլ վերամշակվող նյութեր.»~~

1) 1-ին մասի 17-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**արտադրական կանեփի վերամշակման գործընթաց՝** արտադրական կանեփի բույսերի չորացումը, արտադրական կանեփի բուսախեժի առանձնացումը բույսերից, որոնցից այն ստացվում է, ինչպես նաև այն գործընթացները, որոնց միջոցով ստացվում են յուղ, թուղթ, շինանյութ, թել կամ այլ վերամշակվող նյութեր.»

2) 1-ին մասը լրացնել 20-րդ պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ

«**արտադրական կանեփի չորացված զանգված՝** մշակման գործընթացում խոնավության կորստի արդյունքում ստացված զանգված:»

Հոդված 2. Օրենքի 45.3-րդ հոդվածի 5-րդ մասում և 45.5-րդ հոդվածի 3-րդ մասում «փոխանցել» բառը փոխարինել «օտարել» բառով:

Հոդված 3. Օրենքի 45.4-րդ հոդվածում

1) 1-ին մասի 2-րդ կետում «արտադրական կանեփի բույսի» բառերը փոխարինել «արտադրական կանեփի բույսերի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի» բառերով,

2) 1-ին մասի 2-րդ կետում «տիրապետում» բառից հետո լրացնել «,օգտագործում և տնօրինում» բառերը,

3) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) արտադրական կանեփի բույսի, արտադրական կանեփի, արտադրական կանեփի չորացված զանգվածի կամ արտադրական կանեփի բուսախեժի ոչնչացում »

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Արտադրական կանեփի փաթեթավորման, տեղափոխման, պահեստավորման, ոչնչացման, տիրապետման, օգտագործման և տնօրինման վերաբերյալ պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 45.6-րդ հոդվածում

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիցենզավորման կարգում արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման համար նախատեսվում են պահանջներ, այդ թվում՝ լիցենզիա ստանալու համար դիմողի ֆինանսական և գույքային վիճակի, կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազագույն չափի վերաբերյալ, ինչպես նաև այլ պահանջներ:»:

2) 6-րդ մասի 1-ին կետում «ունեն դատվածություն» բառերը փոխարինել «դատապարտվել են» բառով, 2-րդ կետում «տառապում են թմրամոլությամբ» բառերը փոխարինել «առկա են թմրաբանական հիվանդություններ» բառերով:

3) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա ստացած անձինք նախքան արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավվելը լիցենզավորող մարմին են ներկայացնում աշխատակիցների անձնագրային տվյալները, թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հետ կապված հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկված լինելու կամ այդպիսի վարչական իրավախախտման կատարման համար պատասխանատվության ենթարկված լինելու և թմրաբանական հիվանդությունների բացառման վերաբերյալ տեղեկություններ: »

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ ~~և~~, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ մասերով.

«8. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հետ կապված հանցագործության կատարման համար դատապարտված կամ այդպիսի վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկված կամ թմրաբանական հիվանդությունների առկայությամբ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք չեն կարող հանդիսանալ աշխատակիցներ: Լիցենզավորման կարգով կարող են նախատեսվել աշխատակիցներին վերաբերող այլ պահանջներ:

9. Լիցենզավորող մարմինը վարում է աշխատակիցների ռեեստր, որի վարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից: Աշխատակիցների ռեեստրի տվյալներին հասանելիություն պետք է ունենան նաև լիցենզավորված անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինները:

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը ստացված հայտերը և կից փաստաթղթերը ներկայացնում է շահագրգիռ պետական մարմիններին: Շահագրգիռ պետական մարմինները ներկայացված հայտերը և կից փաստաթղթերը իրենց լիազորությունների շրջանակում ուսումնասիրելով ներկայացնում են դրանց վերաբերյալ դիրքորոշում:

11. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունն իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրում է հայտերը և կից փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը սպառնացող ռիսկերի, տվյալ տնտեսական գործունեության քողի տակ ենթադրյալ հանցավոր գործունեության, դրան նպաստող պայմանների ու պատճառների վերհանման, ինպես նաև տնտեսական անվտանգության ապահովման և կոռուպցիայի հակազդման, թմրամիջոցների միջազգային ապօրինի շրջանառության և հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու, փողերի լվացման դեմ պայքարն արդյունավետ կազմակերպելու նպատակով և ներկայացնում համապատասխան դիրքորոշում:

12 ~~Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը~~ Ներքին գործերի նախարարությունն իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրում է արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավված և նրանց փոխկապակցված անձանց

մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ներկայացված անվտանգության ապահովման պլանը, այնուհետև ներկայացնում է դրանց վերաբերյալ դիրքորոշում:

13 Էկոնոմիկայի նախարարությունն իր լիազորությունների շրջանակում ուսումնասիրում է հայտերը, կից փաստաթղթերը և ներկայացնում է դիրքորոշում՝ արտադրական կանեփի բույսերի սորտերի, արտադրական կանեփի (սերմերի, մայր բույսերի, կտրոնների) մշակության առանձնահատկությունների և արտադրատեսակների քանակների վերաբերյալ:

~~11~~.14 Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է արտադրական կանեփի արտադրության գործընթացների իրականացման համար նախատեսված համապատասխան տարածքների հիմնական պահանջները, որոնց լրացուցիչ չափանիշները կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կողմից:

~~12~~.15 Լիցենզիայի գործողությունը չի կարող ավելի ուշ սկսել, քան լիցենզիայի հայտ ներկայացնելու օրվանից ~~մեկ~~ երկու տարվա ընթացքում: Հայտատուն լիցենզավորման հայտ ներկայացնելիս կարող է հայցել մինչև ~~մեկ~~ երկու տարվա ժամկետի տրամադրում լիցենզավորման ենթակա գործունեության համար նախատեսված կառույցները կառուցելու համար:

~~13~~.16 Եթե ~~մեկ~~ երկու տարվա ընթացքում լիցենզիա ստացած անձը չի ներկայացնում վերապահմամբ նախատեսված փաստաթղթերը, կամ այդ տարածքները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջներին, ապա լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում լիցենզավորող մարմնի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի հիմքով, անկախ տվյալ լիցենզիայի գործողությունը կասեցված լինելու հանգամանքից:»:

Հոդված 5. Օրենքի 45.7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Քվոտայով նախատեսված քանակական սահմանափակումներից շեղումը համարվում է տրամադրված քվոտաների վերանայման հիմք: Քվոտաների վերանայման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Լիցենզավորված անձը մինչև լիցենզիայով սահմանված գործունեության իրականացման տվյալ տարվա վերջին եռամսյակը կարող է դիմել ~~հաջորդ~~ նույն տարվա քվոտաների վերանայման: Ավելացման կարգով քվոտաների վերանայման դեպքում, սահմանվելիք քվոտան չպետք է գերազանցի մեկ լիցենզավորված անձի համար սահմանված և միաժամանակ ընդհանուր սահմանված քվոտաների առավելագույն քանակները: Քվոտաների ~~խախտման~~ փոփոխման թույլատրելի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 6. Օրենքի 45.8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները լիցենզավորման կարգով սահմանված տարածքներում պետք է ապահովեն տեսաձայնագրող սարքերի առկայությունը, ինչպես նաև տեսաձայնագրող սարքերի ձայնագրությունների պահպանումը առնվազն 6 ամիս ժամկետով՝ վերահսկողության շրջանակներում վերահսկողություն իրականացնող պետական մարմինների պահանջով այն ներկայացնելու համար:»:

Հոդված 7. Օրենքի 45.9-րդ հոդվածում

1) 1-ին մասից հանել «և պատասխանատվության միջոցների կիրառման» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով.

«8.Դիտարկման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան պահանջների, լիցենզավորման պայմանների խախտման դեպքում վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձը տալիս է որևէ գործողություններ կատարելու կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբեյալ կարգադրագրեր՝ դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ:

9.Դիտարկման արդյունքները հիմք են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացնելու համար:

10.Դիտարկման ընթացքում հայտնաբերված խախտումների և անհամապատասխանությունների համար վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տված կարգադրագրի պահանջները խախտելու դեպքերի:»:

Հոդված 8. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

2. Սույն օրենքով նախատեսված փոփոխություններից բխող լիցենզավորման կարգում փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-477-19.12.2022-ՏՀ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-477[1] -19.12.2022-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի ամբողջ տեքստում	Օրենքում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարություն» ձևակերպումը, իսկ Նախագծով կիրառվում են և՛ «Հայաստանի Հանրապետության կառավարություն», և՛ «Կառավարություն» ձևակերպումները: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			օրենքի 15-րդ հոդվածի պահանջներն՝ առաջարկում ենք Նախագծում պահպանել հասկացությունների միատեսակ կիրառման պահանջը: Ըստ այդմ առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում կիրառել «Հայաստանի Հանրապետության կառավարություն» ձևակերպումը:		
2.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդվածում**	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 45.4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ. «3) արտադրական կանեփի բույսի, արտադրական կանեփի, արտադրական կանեփի չորացված զանգվածի կամ արտադրական կանեփի բուսախեժի ոչնչացում»: Հարկ է նկատել, որ Օրենքի 45.4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կիրառվող հասկացությունները սահմանված են Օրենքի 3-րդ հոդվածով: Հիմք ընդունելով նշվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներն՝ առաջարկում ենք «արտադրական կանեփի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			չորացված զանգված» հասկացությունը ևս սահմանել Օրենքի 3-րդ հոդվածով: Ըստ այդմ Օրենքի 3-րդ հոդվածում 1-ին մասը լրացնել 20-րդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**արտադրական կանեփի չորացված զանգված՝** մշակման գործընթացում խոնավության կորստի արդյունքում ստացված զանգված:»		
3.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդվածում**	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 45.4-րդ հոդվածը լրացվում է նոր՝ 2-րդ մասով. «2. Արտադրական կանեփի փաթեթավորման, տեղափոխման, պահեստավորման, ոչնչացման վերաբերյալ պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: Հարկ է նկատել, որ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝ Օրենքի 45.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում կատարվող փոփոխության և	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			լրացման արդյունքնում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «1. Արտադրական կանեփի արտադրության լիցենզիան ներառում է նաև սույն օրենքի 45.3-րդ հոդվածով նախատեսված գործունեության ձևերի հետ կապված այլ գործողությունների կատարում, այդ թվում՝ (...) 2) արտադրական կանեփի բույսերի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի, արտադրական կանեփի փաթեթավորում, տեղափոխում, պահեստավորում, տիրապետում, օգտագործում և տնօրինում:», սակայն, Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 45.4-րդ հոդվածը լրացվող նոր՝ 2-րդ մասում նշում է կատարվում միայն արտադրական կանեփի փաթեթավորման, տեղափոխման, պահեստավորման, ոչնչացման վերաբերյալ պահանջների սահմանման մասին: Ըստ այդմ Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասով առաջարկվող Օրենքի 45.4-րդ		

			հոդվածում լրացվող նոր՝ 2-րդ մասում «արտադրական կանեփի փաթեթավորման, տեղափոխման, պահեստավորման, ոչնչացման» բառերից հետո առաջարկում ենք լրացել «,տիրապետման, օգտագործման և տնօրինման» բառերը:		
4.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդվածում**	Հարկ է նկատել, որ Օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հասկացությունը: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ևս՝ հանցագործությունները նախատեսելիս կիրառվում է «թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր» հասկացությունը: Հիմք ընդունելով նշվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներն՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 45.6-րդ հոդվածի 7-րդ և Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 45.6-րդ հոդվածի 8-րդ մասերում կիրառել «թմրամիջոցներ և հոգեմետ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			(հոգեներգործուն) նյութեր» ձևակերպումը:		
5.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդվածում**	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 45.6-րդ հոդվածում լրացվող նոր՝ 9-րդ և 10-րդ մասերում կիրառվում են «Լիազոր մարմին» ձևակերպումը: Հարկ է նկատել, որ Օրենքում սահմանված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման համակարգի մարմնի համար կրճատ տարբերակ: Հիմք ընդունելով վերոգրյալը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներն՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 45.6-րդ հոդվածում լրացվող նոր 9-րդ և 10-րդ մասերում «Լիազոր մարմին» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմին»	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			ձևակերպմամբ:		
6.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդվածում**	Առաջարկվում է վերանայել լիցենզիայի գործողության ուժի մեջ մտնելու և լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար տարածքները և անհարժեշտ կառույցները կառուցելու համար լիցենզավորման հայտ ներկայացնելիս հայտատուի կողմից հայցվող ժամկետը և սահմանել, որ լիցենզիայի գործողությունը չի կարող ավելի ուշ սկսել, քան լիցենզիայի հայտ ներկայացնելու օրվանից երկու տարվա ընթացքում և որ հայտատուն լիցենզավորման հայտ ներկայացնելիս կարող է հայցել մինչև երկու տարվա ժամկետի տրամադրում լիցենզավորման ենթակա գործունեության համար նախատեսված տարածքները և անհրաժեշտ կառույցները կառուցելու համար: Ըստ այդմ նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասում	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			առաջարկում ենք «մեկ» բառերը փոխարինել «երկու» բառերով:		
7.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդվածում**	Նախագծի 4-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «Ներքին գործերի նախարարություն» ձևակերպմամբ:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
8.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ և 5-րդ հոդվածներում**	Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածների համարակալումն անհրաժեշտ է վերանայել համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

9.	**ՀՀ կառավարություն**	**7-րդ հոդվածում**	Ըստ այդմ Նախագծի 7-րդ հոդվածով՝ Օրենքի 45.9-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասում «մարմնի» բառից հետո լրացնել «կողմից» բառը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
10.	**ՀՀ կառավարություն**	**8-րդ հոդվածում**	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
11.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդվածում**	Նախագծի 5-րդ հոդվածում առաջարկում ենք կատարել հստակեցում՝ սահմանել մեկ լիցենզավորված անձի համար և ընդհանուր սահմանված քվոտաները չգերազանցելու մասին դրույթ: Ըստ այդմ նախագծի 5-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «**Հոդված 5.** Օրենքի 45.7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			հետևյալ խմբագրությամբ. «6. Քվոտայով նախատեսված քանակական սահմանափակումներից շեղումը համարվում է տրամադրված քվոտաների վերանայման հիմք: Քվոտաների վերանայման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Լիցենզավորված անձը մինչև լիցենզիայով սահմանված գործունեության իրականացման տվյալ տարվա վերջին եռամսյակը կարող է դիմել նույն տարվա քվոտաների վերանայման: Ավելացման կարգով քվոտաների վերանայման դեպքում, սահմանվելիք քվոտան չպետք է գերազանցի մեկ լիցենզավորված անձի համար սահմանված և միաժամանակ ընդհանուր սահմանված քվոտաների առավելագույն քանակները: Քվոտաների փոփոխման թույլատրելի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդվածում	Նախագծի 1-ին հոդվածում առկա է վրիպակ, որի ուղղման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «փոխանցելլ» բառը փոխարինել «փոխանցելը» բառով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**